

COVID-19. ԿԱՐՂԱ ԵՎ ԿԻՍՎԻՐ ՄԵՐՉԱՎՈՐՈՒՄ ԴԵՏ

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻՑ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԵՎ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, չնայած աշխարհի առաջատար երկրների առողջապահության համակարգերի, առաջատար դեղագործական ֆիրմաների և միջազգային կազմակերպությունների գործադրած ջանքերի, նոր կորոնավիրուսի հարուցած COVID-19 հիվանդության դեմ դեռևս հասուն պատվաստանյութ չկա: Վարակի դեմ պայքարի համար փորձագետները ներկայացնում են նորանոր հանձնարարականներ: Այդ հանձնարարականների մասին է մեր հարցազրույցը՝ «Գեոմեդի» բժշկական համալսարանի պրոֆեսոր, բժշկական գիտությունների դոկտոր, Վրաստանի Բազմազան բժշկական կենտրոնի ղեկավար Ալեքսանդր Պապիտաշվիլու հետ:

- Կորոնավիրուսը պատկանում է ՌՆԹ (ռիբոնուկլեինաթթու) խմբին: Այն շատ փոքր է և դյուրությամբ տարածվում է, ընդամենը կես ժամվա ընթացքում հնարավոր է մեկ մանրէից մեկ միլիոն մանրէ առաջանա: Այն հիմնականում հայտնվում է քիթ-բերանի լորձային տարածքում, ներթափանցում աղիքային լորձաթաղանթ: Գիտականորեն պարզվել է, որ խոսակցության, հագի, փռչող ժամանակ մանրէն բերանի խոռոչից կարող է տարածվել մոտ երկու մետր հեռավորության վրա, իսկ հազարի ժամանակ՝ 3.5, փռչող ժամանակ՝ 5.5 մետր: Քանի որ մանրէն զարգանում է նաև աղիքներում, կղանքում և մեզն էլ կարող են դառնալ վարակի օջախ, ուստի, պաշտպանության ընդհանուր հանձնարարականներին (ծեռքերի պարտադիր լվանալը, դիմակներ, ձեռնոցներ և այլն) հարկ է պելվացնել նաև զուգարանների պարտադիր ախտահանումը:

- Այն որքան ժամանակ այն կարող է մնալ բերանի խոռոչում կամ առարկայի արտաքին մակերեսին:

- Այդ ուղղությամբ գիտնականներն աշխատում են, թեպետ արդեն պարզել են, որ կորոնավիրուսի կենսունակության պահպանման ամենաօպտիմալ ջերմաստիճանը ըստ Ցելսիուսի 4-ից 8 աստիճանն է: Որքան բարձր է ջերմաստիճանը, այնքան շուտ է չորանում մանրէի միկրոսկոպիկ հեղուկը, և այն ոչնչանում է: Այսպես, եթե օդի ջերմաստիճանը 30-40 աստիճան է, ապա մանրէն կենսունակությունը պահպանում է 3-4 րոպե, իսկ 0 աստիճանի դեպքում՝ գրեթե մեկ ժամ: Մանրէն կորցնում է իր վարակիչ ուժը նաև -5° դեպքում:

Հավանական է, որ վարակման նշանակալի մասը տեղի է ունենում փողոցներում, աշխատանքային կոլեկտիվներում, խանութներում:

- Փողոցներում ինչպե՞ս է տեղի ունե-

նում վարակի փոխանցումը:

- Պատկերացրեք, գնում եք փողոցով և ձեր առջեւից գնում են երկու, առանց դիմակի մարդիկ, ովքեր բարձրաձայն խոսում են: Եթե այդ երկուսից թեկուզ մեկը վարակված է, ապա, խոսակցության ժամանակ, նա տարածում է մանրէն՝ 50-80 սմ շրջանագծով: Ետեւից եկողը անցնելու է այդ վարակված տարածքով և, եթե դիմակ չունի, ապա վարակման հավանականությունը մեծ է: Այնպես որ, դիմակը, այսպես ասած, 80 տոկոսով պաշտպանում է, և այն կոչված է ոչ այնքան քեզ, այլ քեզանից պաշտպանվելուն: Եթե բոլորը դիմակներ կրեն, ապա դա նշանակում է, որ մարդիկ միմյանց նկատմամբ հոգատարություն են ցուցաբերում:

- Ասում են, որ հոյ կանայք որոշակիորեն պաշտպանված են կորոնավիրուսից, և որ վարակված մորից երեխային այն չի անցնում:

- Ցանկացած վարակ խիստ վտանգավոր է հղիության ժամանակ: Իսկ ինչ վերաբերում է մորից մորածնի վարակի անցմանը, ապա սկզբում նման կարծիք կար, որ կորոնավիրուսը մորից մանկանը չի փոխանցվում, սակայն Չինաստանում կատարված ուսումնասիրությունները հակառակն ասացուցեցին:

- Ասում են, որ բարձր ջերմաստիճանի դեպքում վիրուսը ոչնչանում է:

- Արդեն կան հետազոտություններ, ըստ որի՝ անգամ 60 աստիճանում վիրուսը չի ոչնչանում, 70 աստիճանի դեպքում այն կենսունակությունը պահպանում է 5 րոպե, իսկ 100-ի դեպքում ոչնչանում է:

- Իսկ որքան ժամանակ է պահպանում կենսունակությունը հագուստի կամ կոշիկների վրա:

- Ամերիկացիների կողմից կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ հագուստի վրա վիրուսը կենսունակությունը պահպանում է 3-ից մինչև 12 ժամ: Ամեն ինչ կախված է շրջապատի խոնա-

վության աստիճանից՝ որքան խոնավ է, այնքան ավելի երկար է դիմանում:

Տվյալ պարագայում անհնար է ստանում հագուստի, կոշիկների ավտահանումը: Կարող եք անգամ չնկատել, թե ինչպես է վարակը հայտնվում հագուստի, կոշիկների վրա: Պատկերացրեք մուտք եք գործում շենք, իսկ ձեզանից առաջ, ինչ-որ մեկը մուտքի մոտ հազարավոր կամ փռչողացել է: Վիրուսը դեռ օդի մեջ է, և այն կարող է նստել ձեր հագուստի, կոշիկների վրա: Այդպիսով վարակը կարող է հայտնվել ձեր բնակարանում: Ուստի, տուն վերադառնալուց հետո, անմիջապես փոխեք հագուստը, կոշիկները դրեք առանձին, խոնավ անծեռոցիկով մաքրեք դռան բռնակները, բոլոր այն իրերի մակերեսները, որոնց կպել եք, ապա խնամքով լվացեք ձեռքերը: Չմոռանաք, հարկ է օդի տաք հոսքերով (ֆենի միջոցով) ախտահանել հագուստն ու կոշիկները, եթե ախտահանել չեք կարող, ապա առնվազն 12 ժամ չպետք է օգտագործեք այդ հագուստն ու կոշիկները:

Բջջային հեռախոսը կարող է լինել վարակման աղբյուր:

- Այո, եթե մեկ ուրիշը օգտվել է ձեր բջջայինից: Այնպես որ, բջջայինը մեկ ուրիշին տալուց հետո, այն խնամքով մաքրեք, բնականաբար, լվացեք նաև ձեռքերը: Ավելացնենք, որ մետաղե և պլաստմասսե իրերի վրա մանրէն կարող է պահպանվել 3-ից մինչև 7 օր: Նման մակերեսները անհապաղ պետք է ախտահանվեն սպիրտի լուծույթով և տաք օդով, առնվազն 70 աստիճան ջերմությամբ:

- Իսկ ի՞նչ կատեխիզիստի մասին:

- Առողջապահության միջազգային



կազմակերպության հետազոտությունները ցույց տվեցին, որ ամենահուսալին հնգաշերտ դիմակներն են, թեպետ դրանք էլ 2-3 ժամից ավելի չի կարելի օգտագործել:

- Որպես վարակման աղբյուր շատ են խոսում թղթադրամներով վարակման հնարավորության մասին:

- Ցավոք, դա իրականություն է, թղթադրամներով շատերն են վարակվում: Թղթի վրա մանրէն պահպանվում է 24 ժամ, մետաղադրամի վրա՝ գրեթե 3 օր: Այնպես որ, խանութներում առևտուր անելիս անպայման պետք է ունենալ անծեռոցիկներ:

- Իսկ, անհրաժեշտության դեպքում, ինչպե՞ս ենք ախտահանելու խանութում գնված պարենամթերքը:

- Տվյալ պարագայում հարցին պետք է մոտենալ հետևյալ կերպ՝ բացառված չէ, որ գնված պարենամթերքը լինի վարակված: Եթե խանութից տուն եք վերադառնում, մթերքը անպայման դրեք հոսող ջրի տակ, կապ չունի այն տաք կլինի, թե սառը: Լվացեք նաև՝ որպես մանր ստացած մետաղադրամները, իսկ թղթադրամները մշակել առնվազն 100 աստիճան օդային հոսքով:

Այսօրվա դրությամբ, վարակից խոսափելու ամենագործուն տարբերակը՝ մնալ տանը սոցիալական հեռավորության պահպանումը և, միաժամանակ, վերը նշված հանձնարարականների խստիվ պաշտպանումն է: Դա պետք է դառնա ձեր կենսաձեռք, ապրելու կարգը:

ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄՈՒՆՑՎԱԾ ԱՐՇԱՆԱՎՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ

ԻՎԱՆ ՖՐԱՆԳՈՒԼՅԱՆ. ՄԱՐԴ, ՈՐԻ ԸՆՈՐՀԻՎ 50 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՋՔՈՒՄ ԵՐԿՐՈՒՄ ՀԱՄԱՃԱՐԱԿ ԶԻ ԲՈՆԿՎԵԼ



Այսօր, երբ աշխարհի 210 երկրներում, այդ թվում նաև Վրաստանում, նոր կորոնավիրուսով հարուցված COVID-19 հիվանդությունը լայն տարածում է գտել, մենք հիշեցինք մեր հայրենակից Իվան Ֆրանգուլյանին, մարդու, ով դեռևս 1921 թվականին վերադառնալով «Իսպանկայի» համաճարակով բռնկված Թբիլիսի (Մայրոդը համարում գրել ենք Վրաստանում «Իսպանկայի» համաճարակի մասին), անմիջապես ձեռնամուխ եղավ համաճարակի դեմ պայքարին, «Արամյանցի» հիվանդանոցում սկսեց այն ժամանակվա համար գրեթե անընթացի հիվանդությամբ տառապողների բուժումը:

1936 թվականի հունիս. կրեմլ. Իոսեֆ Ստալինի առանձնասենյակը. Կուսակցության երկրի առաջնորդին իր ավանդական ծխամորձով, դանդաղ քայլում է առանձնասենյակում:

Եւ գրուցում Թբիլիսիից ժամանած իր հին գինակից ու համախոհ Իվան Ֆրանգուլյանի հետ: Երկուսով հիշում են անցած-գնացած օրերը, թե ինչպես Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի ուսանողը 1912 թվականին հյուրընկալեց Կոբային (Ստալինին) և Սերգոյին (Օրջոնիկիձեին), ինչպես էին կռվում Վոլգայի ափերին... Ինչպես էին քննարկում Վրաստանում առողջապահության և հանգստավայրերի հարցերը...

Վերջում Իոսեֆ Վիսարիոնովիչը կարկամեց և կարծես դժվարացավ ասել իր ասելիքը: Ասաց.

- Վանո, գիտես, թե ինչպես են վստահում... Քեզ հմուտ բժիշկ են համարում, անձամբ տեսել են, թե ինչ բուժակ են... Ով հաշվեց, թե քաղաքացիական կռվի ժամանակ քանի վիրավորի փրկեցիր... Մի խնդրանք ունեն. մայրս՝ Կեկեկ, շատ է ծերացել: Ես ժամանակ չունեմ, որ Թբիլիսի գնամ... Չեմ կարող, սակայն շատ են մտահոգ: Բա-

րեկամաբար խնդրում են, գուցե հետևես մորս, հաճախ լինես նրա տանը, երկար ժամանակ է, ինչ ճանաչում է քեզ և կուրախանա: Եթե անհրաժեշտություն ծագի, բժիշկներ ուղարկիր: Շատ կպարտավորեցնես...

- Կոբա, ի՞նչ ես խնդրում: Ես դա առանց քո խնդրանքի էլ կկատարեի, ավելի ստույգ, նախկինում դա անում էի, մայրիկիդ թույլ զեփյուռի տակ էլ չէի թողնում, կենսաթոշակը ես էի ստանում և տուն բերում... Մի ստիպիր ամեն ինչ ասել, բարեկամների միջև դա առանց այդ էլ նկատի է առնվում... Մի մտախոգվիր:

Իվան Ֆրանգուլյանը վերադարձավ Թբիլիսի: Իոսեֆ Ստալինի հետ հանդիպումից հետո, նրան Անդրկովկասի ժողովրդավարական առընթեր բուժական հանձնաժողովի նախագահի տեղակալին, կարճ ժամանակում նշանակեցին Վրաստանի ԽՍՀ առողջապահության ժողովրդական կոմիսարի տեղակալ... Նա կյանքի մեծ ճանապարհ է անցել...

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ՝ ՄՈՍԿՎԱ

Իվան Ֆրանգուլյանի մայրը ծագումով Կոնստանդնուպոլիսից (այժմ՝ Ստամբուլ) էր, այսինքն՝ Թուրքիայում ապրող հայերի ժառանգորդ էր և ապրում էր Մուխոմիում, իսկ հայրը՝ Սիմոն Ֆրանգուլյանը, քուբայիցի էր, տեղի փոստ-հեռագրատան աշխատակից, նրա նախ-

նիները Իմերեթիի նահանգական քաղաք էին տեղափոխվել Հայաստանից՝ շատ տարիներ առաջ: Ինքը, Իվանը ծնվել էր 1887 թվականի հոկտեմբերի 3-ին, Թբիլիսիում: Հատկանշական է, որ Քուբայիսիի գիմնազիայում Իվան Ֆրանգուլյանը սովորում էր վաղիմիր Մայակովսկու հետ միասին: Գիմնազիան ավարտելուց հետո, 1909 թվականին, Իվան Ֆրանգուլյանին, ծնողները ուսումը շարունակելու համար ուղարկեցին Մոսկվա, որտեղ, համալսարանի բժշկական ֆակուլտետում սովորելիս, 1910 թվականին դարձավ Ռուսաստանի սոցիալ-ժողովրդավարական կուսակցության անդամ: Կուսակցական հանձնարարությունների կատարումը Իվան Ֆրանգուլյանը հիանալիորեն համեմտեցրել էր ուսման հետ: Նա համալսարանի բժշկական ֆակուլտետը գերազանց ավարտեց 1913 թվականին: Այդ ժամանակ էլ վերադարձավ Վրաստան, Մուխոմիի և որպես բժիշկ-օրդինատոր սկսեց աշխատել Մուխոմիի քաղաքային հիվանդանոցում: Ավելի ուշ Իվան Ֆրանգուլյանը ծանոթացավ Պետերբուրգի կոմսերվատորիայի շրջանավարտ աղջկա հետ, որը դարձավ նրա կինը:

Առաջին Համաշխարհային պատերազմի սկզբին՝ 1914 թվականին, Իվան Ֆրանգուլյանը Ռուսաստանի կառավարության կողմից զորակոչվեց և մեկնեց Արեւմտ- (Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ԿՐԹԱԿԱՆ

ԻՆՉՊԵՐՍ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԿԱՎԱՐՏՎԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

COVID-19-ի ֆոնի վրա, վրացական մամուլում ամենաքննարկվողը դպրոցներում տարին ակադեմիական հայտարարելու թեման էր: Հայտնվում էին տարբեր կարծիքներ, յուրովի հիմնավորելու դրանց արդարացիությունը: Ստորև ներկայացնում ենք այն հիմնական սցենարները, ըստ որի, փորձագետների կարծիքով, կարող են զարգանալ իրադարձությունները:

Կրթության փորձագետ Մանանա Նիկոլեիշվիլին նշում է, որ կառավարությունը ոչ մի դեպքում այս ուսումնական տարին ակադեմիական տարի չպետք է հայտարարի: Ըստ նրա, իրականում ուսուցումը հեռավար է ընթանում, դրա համար էլ այս ուսումնական տարին պիտի հաղթահարված համարվի:

- Շատ մեծ աշխատանք է հեռավար ուսուցումը, կասե՛ր բավական ծանր: Ճիշտ է, Վրաստանում համացանցը բոլոր տեղերում բարեկարգ չէ, այդուամենայնիվ, բոլորն էլ ըստ հնարավորության կարողանում են սովորել: Դասն անցկացնելու համար 3 տեսակ ծրագիր պետք է անցնել, ու դրա համար է, որ առցանց ուսուցումը մեծ աշխատանք է կարվածություն է պահանջում:

Այսպես, թե՛ այնպես, կարողացանք անցնել հեռավար ուսուցման: Այս դեպքում, ինչո՞ւ են մարդկանց չարչարում, չգիտեն: Ուսուցիչներից եւ աշակերտներից այս ամենը շատ մեծ ջանք է պահանջվում. ուսուցումն իրականում ընթանում է այնտեղ, որտեղ համացանցի խնդիր չկա: Իսկ ովքեր չունեն, նրանք «Հեռուստադպրոցի» միջոցով են պարապում: Ուսումնական ծրագիրն առանց այն էլ 80 տոկոսով անցել են:

Ասեմ անկեղծորեն, իշխանությանը սխալ տեղեկություն են հաղորդում «վայ» փորձագետները, ահա թե ինչու, ես համաձայնել եմ Մանանա Նիկոլեիշվիլու հետ եւ կրկնում եմ, որ ոչ մի անհրաժեշտություն չկա ուսումնական տարին ակադեմիական հայտարարելու համար:

Ավելացնեմ նաեւ, որ հեռավար կրթության համար դպրոցներում եւ համալսարաններում նոր ուսումնական դասացուցակներ են կազմվել: Նիկոլեիշվիլին նշում է,

որ դասացուցակների կազմումը բավական աշխատատար է, եւ դրանում ջանք են ներդրում ուսուցիչները, աշակերտներն ու նրանց ծնողները: Հետեւաբար, անթույլատրելի է, որ ուսումնական տարին չհամարվի հաղթահարված:

Կրթության հայտնի փորձագետ եւ ուսուցիչ Լադո Աբխազավան կողմնակից է, որ այս տարին, ինչպես ուսանողների, այնպես էլ՝ դպրոցների աշակերտների համար ավարտված համարվի: Աբխազավան հայտարարում է, որ առաջին կիսամյակը լրիվությամբ անց է կացվել, իսկ երկրորդ կիսամյակի մնացած ծրագիրն աշակերտներն առցանց են անցնում:

- Ուսուցումը սովորականի պես շարունակվում է, եւ ընդհակառակը, բոլորս ավելի շատ իրավասություններ ձեռք բերեցինք: Ուսանում-ուսուցումը բավական լավ եւ հաջողությամբ է ընթանում: Թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները, թվային կրթության իրավասությունների պակասը լրացնելու տեսանկյունից, շատ բան սովորեցին: Առցանց կրթությունը տքնաջան ու դժվարին գործ է, դրա համար էլ ձեռքի մի հարվածով վերցնել ու «ոչնչացնել», շատ դժվար կլինի, ու վատ հետեւանքներ կառաջացնի:

Սովորեցինք տիրապետել այն հարթակի, որի միայն յուրացումը բավական մեծ էներգիա եւ ժամանակ պահանջեց: Նախկինում, երբ դպրոց էիր գնում եւ ժամը 17:00-ին արդեն տանն էիր, հիմա ամբողջ օրը պիտի մտնում ես համակարգչի առաջ, որպեսզի լսես յուրաքանչյուր երեխայի եւ ստուգես ուղարկած աշխատանքները: Դրա համար էլ, այն բոլոր սցենարները, որոնք իշխանությունը կքննարկի, միայն մեկ ելք ունեն՝ ուսումնական տարին համարել հաղթահարված:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՅԻՆԵՐԻ ԳՐԱՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության մամուլի ծառայության տեղեկատվությամբ, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, 2020-2021 ուսումնական տարվա առաջին դասարանցիների գրանցման ժամկետները երկարաձգվել են մինչեւ սեպտեմբերի 10-ը:



Հատուկ կարիքներով առաջին դասարանցիների գրանցման առաջին փուլն արդեն հաջողությամբ անցկացվել էր մարտի 2-16-ը, սակայն երկարաձգվել են անհրաժեշտ փաստաթղթերը՝ դպրոց ներկայացնելու ժամկետները:

Մասնավորապես, փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը լրանում է ոչ թե ապրիլի 24-ին, այլ հուլիսի 5-ին, եւ ցանկում ընդգրկված չէ մուլտիդիսցիպլինար հանձնաժողովի եզրակացությունը: Կրթության նախարար Միխեիլ Չխենկելու որոշմամբ, աշակերտների գրանցումը կկատարվի առանց մուլտիդիսցիպլինար թիմի եզրակացության եւ՝ առանց հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտի կարգավիճակ շնորհելու: Այն դեպքում, եթե փաստաթղթերը չներկայացվեն մինչեւ հուլիսի 5-ը, գրանցումը չեղյալ կհայտարարվի:

Գրանցման երկրորդ փուլը կսկսվի մայիսի 11-ին եւ կտևի մինչեւ հունիսի 1-ը ներառյալ, իսկ փաստաթղթերը հնարավոր կլինի ներկայացնել մայիսի 11-ից հուլիսի 5-ը ներառյալ:

Երկրորդ փուլում գրանցվելու են այն երեխաները, որոնց եղբայրը կամ քույրը սովորում են նույն դպրոցում, որտեղ պիտի հաճախի առաջին դասարանցին, ինչպես նաեւ նրանք, ում ծնողները այդ դպրոցի աշխատակիցներ են: Այս գրանցումը վերաբերում է նաեւ այն դեպքերին, երբ նույն ընտանիքից երկու կամ ավելի երեխաներ միեւնոյն ժամանակ հաճախելու են առաջին դասարան:

Երրորդ փուլը համընդհանուր առցանց գրանցումն է: Այս փուլում փոփոխվում են ինչպես գրանցման ժամկետները, այնպես էլ՝ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ժամկետները:

Երրորդ փուլը կսկսվի հունիսի 2-ին եւ կտևի մինչեւ հունիսի 25-ը ներառյալ: Ինչ վերաբերում է փաստաթղթերի ներկայացմանը, ապա վերջնաժամկետը հետաձգվում է՝ հունիսի 2-ից հուլիսի 5-ը ներառյալ:

Գրանցվել հնարավոր է registration.emis.ge կայքէջում:

Գրանցման ժամկետները եւ փաստաթղթերի ներկայացումը նույնպես փոփոխվում են գրանցման վերջին չորրորդ փուլի դեպքում: Այս փուլում առաջին դասարանցիների գրանցումը կսկսվի օգոստոսի 20-ից եւ կտևի մինչեւ սեպտեմբերի 10-ը ներառյալ: Այս փուլում մնացած թափուր տեղերում գրանցվում են այն երեխաները, ովքեր չեն կարողացել գրանցվել I, II եւ III փուլերում:

Կրթության նախարարությունից հայտնում են, որ արտակարգ դրության ժամանակ դպրոցները կհաստատեն գործավարման նոր կանոն, որը թույլ կտա ծնողներին փաստաթղթերն ուղարկել էլեկտրոնային տարբերակով, կամ դրանք ներկայացնել դպրոցների ղեկավարությանը՝ անվտանգության կանոններին համապատասխան: Դպրոցը երկու օրվա ընթացքում ծնողին փոստով կհաստատի դիմումի եւ փաստաթղթերի ընդունումը:

Այն դեպքում, եթե բոլոր փաստաթղթերը ներկայացված լինեն էլեկտրոնային տարբերակով, դպրոցը չի պահանջի դրանց ներկայացումը թղթաբանական տեսքով եւ կհաստատի աշակերտի գրանցումը օրենքով սահմանված ժամկետներում:

Նյութերը պատրաստեց՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՄՈՒՈՑՎԱԾ ԱՐԺԱՆԱԿՈՐ ԱՆՈՒՆՆԵՐ

ԻՎԱՆ ՖՐԱՆԳՈՒԼՅԱՆ. ՄԱՐԴ, ՈՐԻ ՇՆՈՐՀԻՎ 50 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԵՐԿՐՈՒՄ ՀԱՄԱՃԱՐԱԿ ԶԻ ԲՈՆԿՎԵԼ

(Ակիզը՝ 5-րդ էջում)

յան ռազմաճակատի հրաձգային 19-րդ գունդ՝ որպես կրտսեր բժիշկ: Պարզեւատրվեց Ռուսաստանի կայսրության շքանշանով: 1917 թվականի փետրվարից Ռուսաստանի ժամանակավոր կառավարության օրոք, Իվան Ֆրանգուլյանը ընտրական պաշտոններ էր զբաղեցնում բանակում: Բոլշևիկների կառավարման օրոք նա կազմավորեց բժշկական շտապ օգնության ջոկատ, հետո, որպես կամավոր, տեղափոխվեց Մոսկվայի ռազմական օկրուգի բժշկա-սանիտարական բաժին: Ավելի ուշ նշանակվեց բանակի սանիտարական բաժնի պետ Վոլգայի մարզում, որից հետո դարձավ 13-րդ բանակի սանիտարական բաժնի պետ:

1931 թվականից Իվան Ֆրանգուլյանը Վրաստանի առողջապահության ժողովմիստրիատի կոլեգիայի անդամ էր, ապա՝ Անդրկովկասի ժողովմիստրիատի առընթեր բժշկական հանձնաժողովի նախագահի տեղակալ, իսկ 1936 թվականից՝ Վրաստանի ԽՍՀ առողջապահության ժողովրդական կոմիսարի առաջին տեղակալ: 1945 թվականին նրան շնորհվեց Վրաստանի վաստակավոր բժշկի եւ բժշկական գիտությունների դոկտորի կոչում: Իսկ մինչեւ 1952 թվականը, կենսաթոշակի անցնելը, Իվան Ֆրանգուլյանը աշխատում էր Վրաստանի առողջապահության նախարարության սանիտարական գիտա-հետազոտական ինստիտուտի տնօրեն... Վախճանվեց 1971 թվականին, 82 տարեկան հասակում:

երկու շքանշանի: 1977 թվականին Թբիլիսիի Սամգո-րիի շքանշանի Լիլոյի թաղամասի փողոցներից մեկը կոչվեց Իվան Ֆրանգուլյանի անունով:

ԱՐԺԱՆԱԿՈՐ ՀԵՏՆՈՐԴՆԵՐԸ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ...

Իվան Ֆրանգուլյանը արժանավոր հետնորդներ ունի՝ նրա որդին, Վարդան Ֆրանգուլյանը հայտնի ինժեներ էր, ով շատ էլեկտրակայաններ է նախագծել ինչպես Խորհրդային Միությունում, այնպես էլ՝ արտասահմանում՝ Ասիայի եւ Աֆրիկայի երկրներում: Իսկ թոռը, Գիորգի Ֆրանգուլյանը, որը ծնվել է 1945 թվականին, Թբիլիսիում, Սոլոլակում, ներկայումս ապրում ու աշխատում է Ռուսաստանում եւ հայտնի քանդակագործ է, Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս, արժանացել է Ռուսաստանի Դաշնության ժողովրդական նկարչի կոչման: Գիորգի Ֆրանգուլյանը շատ քանդակների հեղինակ է, դրանց թվում՝ «Քրիստոսի խաչումը» (կանգնեցված է Իտալիայում, Ռավեննայում), Պետրոս Առաջինի քանդակը (Բելգիա, Անտվերպեն), Ալեքսանդր Պոլկինի արձանը (Բելգիա, Բրյուսել), Բուլատ Օկուջավայի արձանը (Մոսկվա, Արբատում), Արամ Խաչատրյանի արձանը (Մոսկվա), Բորիս Ելցինի արձանը (Եկատերինբուրգ), Ալբերտ Էնշտեյնի, Միխեիլ Բուլգակովի, Դիմիտրի Շեստակովիչի եւ Եվգենի Պրիմակովի արձանները (Երուսաղեմում եւ Մոսկվայում) եւ այլն:

Գիորգի Ֆրանգուլյանը իր հարցազրույցներում միշտ հպարտությամբ ընդգծում է, որ ինքը ծնվել է Թբիլիսիում, մեծապես հարգում է Վրաստանը, վրացիներին, թբիլիսցիներին, սիրում է վրացական ազգային խոհանոցն ու ուտեստները (բնականաբար, հայկականի հետ միասին), հաճույքով խմում է վրացական գինին...

ՄԻՄՈՆ ԿԻԼԱՉԵ

ՎՐԱՍՏԱՆԻ ՂԵՆԱԿՈՐ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՈՐ

1921 թվականին Իվան Ֆրանգուլյանը վերադարձավ Վրաստան եւ նշանակվեց Վրաստանի ԽՍՀ առողջապահության կոլեգիայի անդամ: 1925 թվականից նա նշանակվեց հատուկ բժշկական-սանիտարական վարչության նախագահ եւ առողջապահության կազմակերպչական բաժնի վարիչ:

Այն ժամանակվա մամուլը իրապարակել էր Իվան Ֆրանգուլյանի գործունեությունը պատկերող փաստեր: Ահա թե ինչ էր գրում 1928 թվականի ապրիլի 27-ին «Կոմունիստի» թերթը. «Կառավարության կողմից նշանակված հանձնաժողովը գումարեց հատուկ միստ, որին ներկա էին Մարիամ Օրախելաշվիլին (նախագահ) եւ անդամներ Իվան Ֆրանգուլյանը, Ալեքսի Դամարաուլին, Միխեիլ Սուջիաշվիլին եւ ուրիշներ: Նիստում քննարկեցին Խեւսուրեթիում բշկության հետ կապված հարցեր: Իվան Ֆրանգուլյանին հանձնարարվեց կարգավորել բժշկական հաստատությունների սանիտարական հագեցվածությունը»:


ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅՈՑ ԳՆԱՊԱՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ` ՀԱՄԱՄԱՐԿԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑ Է

(Սկզբը` 1-ին էջում)

Ըստ Նիկոլ Փաշինյանի, ապրիլի 24-ը երկար տարիներ հայ ազգային միասնության, համախմբման, կարգապահության խորհրդանիշ է եղել, եւ այսօր այս խորհրդանիշը պետք է արտահայտվի շատ ավելի ուժեղ, լինի շատ ավելի տեսանելի:



որ նմանատիպ իրավիճակում են նաեւ Սփյուռքի մեր հայրենակիցները, որոնք կրկին կորոնավիրուսի համավարակի պատճառով չեն իրականացնելու աշխարհի տարբեր երկրներում ավանդաբար տեղի ունեցող բազմահազարանոց երթերը, հիշատակի բազմամարդ միջոցառումները,- հայտարարեց Հայաստանի վարչապետը:

- Նոր տիպի կորոնավիրուսի համավարակը բոլորիս դրել է աներեւակայելի մի իրավիճակում, երբ 55 տարի շարունակ տեղի ունեցող ապրիլքսանչորսյան երթը` հարյուր հազարավոր քաղաքացիների մասնակցությամբ` պիտի տեղի չունենա այս տարի, որովհետեւ դա համաճարակային ընթացիկ լարված իրավիճակը չվատթարացնելու պարտադիր

եւ անխուսափելի պայման է: Նախ ուզում են շնորհակալություն հայտնել մեր բոլոր հայրենակիցներին` կառավարության այս որոշմանը ըմբռնունով վերաբերվելու համար: Հարկ է արձանագրել,

խելու նպատակով հայտարարված արտակարգ դրության օրերին, տեղաշարժի սահմանափակման պատճառով, ապրիլի 24-ին այցելուների մուտքը Ծիծեռնակաբերդի հուշահամալիր փակ էր:

ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆ ԵՐԹ` ՎԻՐՏՈՒՄ

Այս տարի ամբողջ աշխարհով մեկ Օսմանյան կայսրությունում Հայոց Ցեղասպանության 105-րդ տարելիցին նվիրված միջոցառումները անցկացվում են այլընտրանքային եղանակով` COVID-19-ի պատճառով:

Բոլոր այն երկրներում, որտեղ հայկական սփյուռքն անցկացնում է միջոցառումներ` Օսմանյան կայսրությունում Հայոց Ցեղասպանության ճանաչման պահանջով, այս տարի էլ դա արեցին, սակայն, ոչ այնպես, ինչպես ամեն տարի: Այն կայացավ, բայց առանց տնից դուրս գալու:

մուտքներից լուսավորել սմարթֆոնները կամ լուսային լապտերները` որպես Հավերժական կրակի մոտ խորհրդանշական ներկայություն:

Ապրիլի 24-ի առավոտյան եկեղեցիներում մատուցվեց Սուրբ պատարագ: Ապա, ապրիլի 24-ին ժամը 12-ին ամբողջ աշխարհում դողանքեցին առաքելական Սուրբ եկեղեցիների զանգերը, եւ անցկացվեց կանոնականացման արարողությունը:

Միջոցառումները սկսվեցին ապրիլի 23-ին, ժամը 21:00-ին: Հայաստանի կառավարությունը բոլորին կոչ արեց անջատել իրենց բնակարաններում լույսերը եւ լուսա-

ՀԱՎԱԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ` ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Ապրիլի 22-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը կառավարությունում հանդիպում ունեցավ Ազգային ժողովի «Իմ քայլը», «Բարգավաճ Հայաստան» եւ «Լուսավոր Հայաստան» խմբակցությունների տնտեսական բլոկը ներկայացնող պատգամավորների հետ:

10 հազար 531 իրավաբանական անձ եւ մոտ 639 հազար 592 ընտանիք: Հակաճգնաժամային միջոցառումների շրջանակում տեղաբաշխվել է 29 մլրդ 900 մլն դրամ:

Հանդիպմանը Հայաստանի փոխվարչապետ, պարետ Տիգրան Ավինյանը տեղեկություն ներկայացրեց կորոնավիրուսի համավարակի հետ կապված իրավիճակի վերաբերյալ:

Մասնակիցները մտքեր փոխանակեցին հակաճգնաժամային միջոցառումների, ինչպես նաեւ համավարակի կանխարգելման ուղղությամբ իրականացվող քայլերի վերաբերյալ: Վարչապետը եւ կառավարության անդամները պատասխանեցին պատգամավորներին հուզող հարցերին եւ ներկայացրեցին պարզաբանումներ:

Հանդիպմանը քննարկվեց կառավարության կողմից ձեռնարկված հակաճգնաժամային միջոցառումների իրականացման գործընթացը: Հանրագումարելով այդ ուղղությամբ իրականացված աշխատանքի արդյունքները, Հայաստանի վարչապետը նշեց, որ, այս պահի դրությամբ, կառավարության ընդունած հակաճգնաժամային միջոցառումներից օգտվել է

ԶԱՐԵՆ ՍԻՆԱՆՅԱՆ. «ՔԱՅԼ ԴԵՊԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ

ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱՅՍ ՏԱՐԻ ՔԻՉ ՀԱՎԱՆԱԿԱՆ Է»

Հայաստանի վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեն Սինանյանը կորոնավիրուսի համավարակի տարածման պառճառով քիչ հավանական է համարում, որ այս տարի հնարավորություն կլինի իրականացնել «Քայլ դեպի տուն» ծրագիրը:

- Ամռանը մենք ունենք մեր ամենամեծ ծրագրերից մեկը` «Քայլ դեպի տուն»-ը, ինչպես նաեւ «Պատանի առաջնորդների ճամբար»-ը: Այս պահին քիչ հավանական է թվում, որ մենք կկարողանանք այդ ծրագրերն իրագործել այս տարի, ասաց Զարեն Սինանյանը:

չտանք, որ սփյուռքի հետ մեր կապն ընդհատվի,- նշեց Զարեն Սինանյանը:

Նա նշեց, որ ծրագրված է նաեւ երեք համաժողով, որոնք պետք է Հայաստանում անցկացվեին սեպտեմբերին, բայց կիրականացվեն առցանց եղանակով:

Հայաստանի վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարը հույս հայտնեց, որ հնարավոր կլինի իրականացնել տարվա երկրորդ կեսին ծրագրված նախագծերը:

- Համաժողովները փորձելու ենք անել առցանց: Պետք է հարմարվենք այս իրավիճակին, եւ պետք է թույլ

«Քայլ դեպի տուն» ուսումնաճանաչողական ծրագիրը նախատեսված է 13-21 տարեկան սփյուռքահայ պատանիների եւ երիտասարդների համար:



ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱՆՑԱԿԱՆՅԱՆ-ՄԱՍԵՂՅԱՐՈՎ ՏԵՍԱԿՈՆՖԵՐԱՆՍԸ

Ապրիլի 21-ին կայացավ Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներ Զոհրաբ Մնացականյանի եւ Էլմար Մամեդյարովի տեսակոնֆերանսը:

Այն անցկացվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովի (Ռուսաստան), Ստեֆան Վիսկոնտիի (Ֆրանսիա), Էնդրյու Շոֆերի (ԱՄՆ), ինչպես նաեւ` ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի անդամների միջոցով: Այս տեսակետից ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները կարեւորեցին իրենց հայտարարությունը եւ ՄԱԿ գլխավոր քարտուղարի համաշխարհային զինադադարի վերաբերյալ կոչը:

ղաղ կարգավորման գործընթացի վերջին զարգացումները, տարածաշրջանում նոր տիպի կորոնավիրուսի տարածման արդյունքում ստեղծված իրավիճակը` ընդգծելով, որ այս նոր մարտահրավերին առերեսվում են տարածաշրջանի բոլոր ժողովուրդները` անկախ քաղաքական սահմաններից: Անդրադարձ կատարվեց տարածաշրջանում տեղի ունեցած վեր-

ջին զարգացումներին:

Նոր տիպի կորոնավիրուսի դեմ մղվող գլոբալ պայքարի համատեքստում առանձնահատուկ ընդգծվեց հրադադարի ռեժիմի անվերապահ պահպանման եւ ամրապնդման ուղղությամբ քայլերի ձեռնարկման անհրաժեշտությունը: Այս տեսակետից ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները կարեւորեցին իրենց հայտարարությունը եւ ՄԱԿ գլխավոր քարտուղարի համաշխարհային զինադադարի վերաբերյալ կոչը:

ՊՈՆԱՎ ԹՐԱՄԹ. «ՀԻՇՏԱԿՈՒՄ ԵՆՔ ՄԵՑ ԵՂԵՆԻ ԶՈՆԵՐԻՆ»



Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփն ուղերջ է հղել Հայոց ցեղասպանության 105-րդ տարելիցի կապակցությամբ:

Ներկայացնում ենք Սպիտակ տան տրամադրած ուղերջն ամբողջությամբ.

«Այսօր մենք միանում ենք համաշխարհային հանրությանը` հիշելու 20-րդ դարի ամենասարսափելի զանգվածային վայրագություններից մեկի` Մեծ Եղեռնի զոհերին: Սկսած 1915-ից, Օսմանյան կայսրության գոյության վերջին տարիներին մեկուկես միլիոն հայեր տեղահանվեցին, կոտորվեցին կամ մահվան երթի դադարավայրերում: Հիշափակի այս օրը, մենք հարգանքի փուրք ենք մատուցում նրանց, ովքեր կորցրեցին իրենց կյանքը, միաժամանակ վերահաստատում ենք մեր հանցնառությունը ամրապնդելու ավելի մարդասեր ու խաղաղ աշխարհը: Ամեն փարի, ապրիլի 24-ին, մենք անդրադարձ ենք կատարում Ամերիկայի ու հայ ժողովրդի ուժեղ եւ ամրացող կապին: Մենք հպարտ ենք 1915 թ. Հայկական եւ սիրիական օգնության ամերիկյան կոմիտեի հիմնադիրների հսկայական ջանքերով, որոնք որոշիչ մարդասիրական օժանդակություն տրամադրեցին հայ փախստականներին, եւ շնորհակալ ենք հազարավոր ամերիկացիներին, որոնք օժանդակեցին եւ կամավորագրվեցին օգնելու իրենց տներին տեղահանված հայերին:

Այս օրը ողբերգության լույսի ներքո մենք ակնապես ենք լինում նաեւ հայ ժողովրդի ուժին ու ամրությանը: Երջանիկ ենք, որ շատ հայեր իրենց հարուստ մշակույթը բերեցին դեպի մեր ափեր եւ այդքան մեծ ներդրում ունեցան մեր երկրի կյանքում լինելով ակնավոր զինվորականներ, նշանավոր արտիստներ, անվանի ճարտարապետներ եւ հաջողակ գործարարներ:

Մենք ողջունում ենք հայերի եւ թուրքերի ջանքերը` ճանաչելու եւ հաշվի նստելու իրենց ցավալի պատմության հետ: Այսօր մենք հավատում ենք` դա մեր պարտականությունն է` հիշելու նրանց, ովքեր փառապել են ու զոհվել, եւ վերահաստատում ենք մեր նվիրվածությունը` աշխարհում կրոնական եւ էթնիկ փոքրամասնությունների պաշտպանության գործին»:

Այս օրը ողբերգության լույսի ներքո մենք ակնապես ենք լինում նաեւ հայ ժողովրդի ուժին ու ամրությանը: Երջանիկ ենք, որ շատ հայեր իրենց հարուստ մշակույթը բերեցին դեպի մեր ափեր եւ այդքան մեծ ներդրում ունեցան մեր երկրի կյանքում լինելով ակնավոր զինվորականներ, նշանավոր արտիստներ, անվանի ճարտարապետներ եւ հաջողակ գործարարներ:

ՎԱՐՈՎՄԱՆ 1596, ԲՈՒԺՄԱՆ` 728, ՄԱՀՎԱՆ` 27 ԴԵՊԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ապրիլի 24-ին Հայաստանում արձանագրվել է կորոնավիրուսով վարակվելու 73 նոր դեպք: Օրվա դրությամբ կորոնավիրուսի հասարակած դեպքերի ընդհանուր թիվը 1596 է, արձանագրվել է մահվան 27 դեպք: Ընդհանուր առմամբ, կատարվել է 16 հազար 552 թեստ: Ապաքինված բուժառուների թիվն ավելացել է 69-ով եւ դարձել է 728: Այս պահին փաստացի բուժում է ստանում 841 բուժառու:

Հայաստանի առողջապահության նախարարությունից հայտնում են, որ մահացած բուժառուները ունեցել են ուղեկցող բրոնխի հիվանդություններ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԹԲԻԼԻՍԻ ԶԵՌՈՒՄՏԱԱՇՏԱՐԱԿԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՈՇԻ ԳՈՒՅՆԵՐՈՎ

Աջակցություն կորոնավիրուսի դեմ պայքարի՝ Թբիլիսիի հեռուստաաշտարակը լուսավորվել է Հայաստանի պետական դրոշի գույներով:



«Այս պայքարում մենք ձեր կողքին ենք: Միասին կհաղթահարենք այս համավարակը»,- Վրաստանն այս ուղերձն է հղում Հայաստանին:

«Համաճարակը հաղթահարելու ավելի լավ տարբերակ չկա, քան ջանքերը համատեղելն է»,- քվիթերյան իր միկրոբլոգում գրել է Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Ջալկալիանին՝ անդրադառնալով կորոնավիրուսի դեմ պայքարում ի աջակցություն Հայաստանի Թբիլիսիի հեռուստաաշտարակի Հայաստանի դրոշի գույներով լուսավորմանը:

Ըստ Դավիթ Ջալկալիանու, այս գործողությունը կխրախուսի հայ ժողովրդին եւ կօգնի նրանց հաղթահարել COVID-19-ի ճգնաժամը:

Նշենք, որ, ի նշան աջակցության, նախորդ օրերի ընթացքում, Թբիլիսիի հեռուստաաշտարակը խորհրդանշորեն լուսավորվել է Իտալիայի, Իսպանիայի, Թուրքիայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի, Միացյալ Թագավորության, Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Ադրբեջանի դրոշների գույներով:

ԵՂԱՆԱԿ



ՁՅՈՒՆ՝ ԱՊՐԻԼԻՆ

Արդեն մեկ շաբաթ է, ինչ Վրաստանում եղանակը կտրուկ վատթարացել է: Ամձրեւ, անգամ ձյուն է տեղացել երկրի առանձին վայրերում:

Ըստ Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքի նախարարության ճանապարհային վարչության, Սցխեթա-Ստեփանծմինդա-Լարս շրջան, Սցխեթա-Ստեփանծմինդա-Լարս կամուրջի վրա հաստատված սառույթի հաստությունը մոտավորապես 10-15 սմ է: Երբեք երկրորդ կամ Գուրուրի եւ Դարիալի-Լարս հատվածներում թույլատրվում է առանց կանգառի: Պարեկային ուղիներում կհետեւի կարգի պահպանմանը:

Ճանապարհի մնացած հատվածներում երթևեկությունն ազատ է: Ստացված տեղեկության համաձայն, ձյուն է տեղացել նաեւ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետներում, Բակուրիանիում, Տաբատուբուրի ու Մուլիբ գյուղերում: Զգալիորեն ընկել է նաեւ օդի ջերմաստիճանը:

ԹԱՏՐՈՆ

ԿԱՐԱՆՏԻՆ. ԴԻՏԵՆՔ ՊԻԵՍԸ... ԱՌՑԱՆՑ

Թբիլիսիի Պ.Աղամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը միացել է Վրաստանի կառավարության՝ տանը մնալու հորդորներին: Հնագույն թատրոնը, հանդիսատեսի հետ կապը պահելու համար, դիմել է ժամանակակից նորագույն մեթոդի: Աղամյանցիներն առաջարկում են ամեն շաբաթ օր, ժամը 18:00-ին Tbilisi State Armenian Dramatic Theatre youtube-յան հասցեի օգտատերերին դիտել իրենց թատրոնի տարբեր ժամանակներում բեմադրված ներկայացումների տեսագրությունները: Օնլայն հանդիսատեսին արդեն հասանելի են «Մեղադրական եզրակացություն», «Ազդակն ասաց», «Դեպք Լուրսինի փողոցում» եւ «Գլխավոր դերը» բեմադրությունների առցանց տարբերակները:



Այսօր՝ արիլի 25-ին, ժամը 18:00-ին օգտատերերը կարող են դիտել մի քանի ամիս առաջ բեմադրված Լեւոն Սվանաձեի «Ի՞նչ պատահեց գազանանոցում» ներկայացումը:

Մի զարմացեք, բայց չնայած կարանտինի, չի դադարում նաեւ թատրոնի ստեղծագործական աշխատանքը: ZOOM (հեռավար հաղորդակցություն) հավելվածը նաեւ հնարավորություն է տալիս առցանց թատերական փորձեր անցկացնել: Այս պահին ռեժիսոր Լեւոն Ուզունյանն իրականացնում է օնլայն փորձեր՝ բեմելի պատրաստելով Էլենա Սկորոխոդովայի «Մոխիր մի գցեք հատակին» պիեսը՝ երկու դերակատարների՝ Սնեժանա Յաղուբյանի եւ Էդուարդ Մուրադյանի մասնակցությամբ:

Պ.Շենոյի «Դուք ողջ լինեք» ներկայացումը: Թատերասերներին տեղեկացնենք, որ թատրոնի ընթացիկ նորություններին կարող են տեղեկանալ Tbilisi State Armenian Dramatic Theatre ֆեյսբուքյան էջում:

ԱՆՆԱ ՊԵՉԵՆԵՎՍԿԱՅԱ

Թբիլիսիի Պ.Աղամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի հասարակության հետ կապերի պատասխանատու Նկարում.- Էդուարդ Մուրադյանը եւ Սնեժանա Յաղուբյանը՝ առցանց փորձի ժամանակ

ԳՆԱՀԱՏՈՒՄ



ՀԱՅԿԱԿԱՆ ԴՈՒԴՈՒԿԸ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ՃԱՆԿՈՒՄ

Հայկական դուրսի երաժշտությունը դեռ 2005թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն հռչակել է Մարդկության բանավոր եւ ոչ նյութական մշակութային ժառանգության գլոբալ ժառանգության մեկը, եւ 2008թ. «Դուրսն ու իր երաժշտությունը» վերնագրով հայկական ոչ նյութական մշակութային ժառանգության տարրն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում:

Վերջին տարիներին բազում ծրագրեր են իրականացվում դուրսի պահպանության, փոխանցման եւ հանրահռչակման ուղղությամբ, կազմակերպվում են տեղական եւ միջազգային փառատոներ, ֆլեշմոբեր եւ այլ միջոցառումներ: Դրա վկայություններից է Ֆրանսիայի Գրեմոբլ քաղաքում մեկնարկած «Արի պարի քուչարի» ֆլեշմոբը, որն այս տարի նվիրվում է Դուրսի (ծիրանափող) հայկական նվագաբանին:

Calendar grid for April 2020 with dates 1-30 and 50.

Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Նար-Դոսի նովելաչարի հերոսուհի: 4.Եկեղեցու սպասավոր: 9.«... երկու տառ, ... հասարակ մի դերանուն» (Պարույր Սեւակ): 10.Ժխտական նախածանց: 11.Գործվածքի տեսակ: 12.Քաղաք Արաբական Միացյալ Եմիրություններում: 13.Վրաց հայտնի երգչուհի ... Սոխաձե: 14.Հարաբերական դերանուն: 15.Շիրվանզադեի ստեղծագործություններից: 16.Հանրահայտ հայ դերասանուհի Գայլա ...: 17.Համադասական շաղկապ: 19.Վրացական մանկական անսագիր: 20.Գետ Վրաստանում: 23.Ժամանակակից, այժմեական: 24.Ավազաշատ տարածք: 27.Վրաստանը հինում: 29.Ֆրանսիացի կոմպոզիտոր Շառլ ...: 30.Պարի տեսակ: 32.Ողջ, ամբողջ: 33.Բանջարանոցային բույս: 34.Ե՛վ Շերենցը, Ե՛լ Գասպարյանը: 35.Նախկին հայ քաղաքական գործիչ ... Սիրադեյան: 36.Սիբիրը նվաճողը: 37.Երկի բովանդակությունը: 40.Ամուսինը մահացած կին: 42.Անձնական դերանուն: 43.Ուզբեկստանի քաղաքամայրը: 45.Հայերենի վերջածանց: 47.Արաքս գետի անվանումներից: 48.Երգչուհի ... Դարբինյան: 49.Լվացքի փոշի: 50.Վիրահայ պատանի ստեղծագործողների ժողովածու:

ՈՒՂԱՆՅԱՅ. 2.Ամենայն հայոց բանաստեղծ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Տիխոնով: 9.Ուրտ: 10.Ֆիլմ: 11.Դեկոլտե: 13.Սիմոն: 16.Մե: 17.Արտ: 19.Միլկի: 22.Սատար: 24.Տաթևիկ: 25.Բալի: 27.Մարաբո: 29.Բեռնար: 32.Ավելի: 33.Լիտավր: 35.Չլուտ: 38.Ճոն: 40.Սիբերա: 41.Փշառ: 44.Աթոս: 47.Ուրտ: 48.Սոյա: 50.Ատամ: 51.Հրո: 52.Ու: 53.Ուռ: 54.Եմ: 55.Վերտ: ՈՒՂԱՆՅԱՅ. 1.Գիտեն: 2.Քորոց: 3.Կոֆտա: 4.Հոմս: 5.Հողմ: 6.Ատեն: 8.Վերի: 12.Կեղտ: 14.Իգիթ: 15.Ոսկի: 18.Կրաք: 19.Մանել: 20.Լեւան: 21.Իկեր: 23.Արական: 26.Լուր: 28.Ամիճ: 29.Բել: 30.Ռիչի: 31.Ապուր: 34.Տոյոտա: 36.Լեյո: 37.Տապաստ: 39.Յար: 42.Շունչ: 43.Տոն: 45.Թառ: 46.Սալ: 48.Սով: 49.Յուր:

Advertisement for VRASTAN (ՎՐԱՍՏԱՆ) with contact information: Phone 0105 4.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774, Website www.vrastan.ge, Email: vrastan.press@gmail.com, Address: Tbilisi, Georgia, Index 66445.